ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 03 >> փետրվարի 2014թ. N 10

ք. Արմավիր

ՍՐԱՊԻՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի տասներորդ մասով, 15-րդ հոդվածի 2.2-րդ կետով և չորրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 63-3.1-18) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 1-ի եզրակացությունը և Սրապիոն Մարտիրոսյանի 2014 թվականի փետրվարի 1-ի դիմումը.

կարգադրում եմ՝

1. Սրապիոն Մարտիրոսյանին 2014 թվականի փետրվարի 3-ից, մեկ ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 63-3.1-18) քաղաքացիական ծառայության պաշտոնում:
2. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ 100800 (մեկ հարյուր հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*